

ՄԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԶՄԻՆԱ

Սյունիքի գիտամշակութային զարգացման հիմնադրամ
Ակսել Բակունցի տուն-թանգարան

ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅԿ ԴԱՆԴՅԱՆ ԵՎ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Բանալի բառեր՝ Ակսել Բակունց, Հայկ Դանդյան, թանգարանային ժառանգություն, նվիրվածություն, բնաձնշումների տարիներ, հրատարակությունների փրկություն, գրական հիշողություն, արխիվային վավերագրեր, թանգարանագիտություն, մշակութային հիշողություն:

Keywords: Aksel Bakunts, Hayk Danghyan, museum heritage, dedication, years of repression, preservation of publications, literary memory, archival documents, museum studies, cultural memory.

*«1956 թվից հայ գրական մեծերի հետ Ձեզ էլ եմ դասարան տարել
և իմ սաների զգայուն հոգիներին հաղորդակից դարձրել
Ձեր շենշող ստեղծագործությունների կախարդական հմայքը...»*

Հայկ Դանդյան

Ակսել Բակունցի տուն-թանգարանը ստեղծվել է մարդկային նվիրման և հոգատարության շնորհիվ: Իր հիմնադրումից ի վեր այն ձևավորվել է բացառապես նվիրյալների ջանքերով՝ տարիների ընթացքում համալրվելով արժեքավոր ցուցանմուշներով, ձեռագրերով ու գրքերով:

Գրողի ժառանգությունը պահպանելու ճանապարհի առաջնագծում էր նրա եղբայրը՝ Վահան Բակունցը, որի անդադրում հոգատարությունն ու հավատարմությունը դարձան թանգարանի ձևավորման հիմքը: Հետագայում նրա օրինակին հետևել են Բակունցի մտերիմ ընկերները, հարազատները և այն ազնվագույն մարդիկ, որոնք տարբեր ճանապարհներով առնչվել էին գրողի կյանքին ու գործունեությանը: Այս մարդկանց շնորհիվ են ժամանակի փորձություններին դիմակայել ու մեզ հասել անփոխարինելի արժեքներ:

Թանգարանի յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր պատմությունը՝ երբեմն՝ դեպքերի, երբեմն՝ մարդկային հոգիների պատմությունը: Այդ պատմությունները միաժամանակ վկայում են, թե ինչպես կարելի է հավատարմությամբ և սիրով պահպանել ոչ միայն գրական ժառանգությունը, այլև ազգային հիշողությունը:

Ակսել Բակունցի տուն-թանգարանի նվիրյալների մեջ առանձնահատուկ տեղ ունի Հայկ Դանդյանի անունը: Ծնվելով 1904 թվականին Էջմիածնում՝ Դանդյանը երկար

տարիներ դասավանդել է հայ գրականություն էջմիածնի մանկավարժական ուսումնարանում և Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: Նա եղել է նուրբ մտածողությամբ մանկավարժ, մտերմացել է հայ գրականության և մշակույթի շատ գործիչների հետ, արժանացել է պետական պարգևների, իսկ 1965 թվականին ստացել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչում:

Դանդյանը ոչ միայն գրականության սիրահար էր, այլև Ակսել Բակունցի տաղանդի իրական գնահատողը: Նրա շնորհիվ կորստից փրկվել և Բակունցի տուն-թանգարանին են հանձնվել երեք արժեքավոր հրատարակություններ, որոնք լույս են տեսել գրողի կենդանության օրոք.

1. *Ա. Բակունց, Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը», Ե., Պետհրատ, 1932 թ.,*
2. *Ն. Գոգոլ, Տարաս Բուլբա (հայերեն թարգմանությունը և առաջաբանը՝ Ա. Բակունցի), Ե., Պետհրատ, 1934 թ.,*
3. *Ջոնաթան Սվիֆտ, Գուլիվերի ճանապարհորդությունը (թարգմանիչ՝ Կարեն Միքայելյան, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Ա. Բակունց), Ե., Պետհրատ, 1934 թ.:*

Այս գրքերը, հրատարակված նախքան գրողի գնդակահարությունը, խորհրդանշում են ոչ միայն Բակունցի ստեղծագործական հզոր ընթացքը, այլև այն պատմական խիզախությունը, որով նման արժեքները հնարավոր է եղել պահպանել 1930-ականների ահուսարսափ տարիներին:

Ինչպե՞ս են դրանք փրկվել բռնաճնշումների մրրիկից և ինչպե՞ս են հասել թանգարան — այս հարցերին է նվիրված հրապարակումը՝ հիմնված արխիվային փաստաթղթերի և Հայկ Դանդյանի ձեռագրային ժառանգության վրա:

1981 թվականի փետրվարի 13-ին Հայկ Դանդյանը նամակ է գրել թանգարանի հիմնադիր տնօրեն Քաջիկ Միքայելյանին, որտեղ գրողի նկատմամբ իր խոր հարգանքով է արտահայտվել.

«Մեծարգո՝ ընկեր,

թանգարանին եմ ուղարկում իմ վերնուշներն ու խոհերը մեծ գրողի մասին:

Անցնող ժամանակի հետ պակասում են Բակունցին հանդիպողների թիվը:

Ուրեմն՝ ինչ հնարավոր է, թող փրկվի մոռացությունից» [Ակսել Բակունցի տուն թանգարանի գիտաօժանդակ ֆոնդ]:

Դանդյանի հուշագրությունը յուրահատուկ գրույց է՝ ուղղված Բակունցին: Նրա պատմությունն ինքնին դարձել է մի նոր վավերագիր՝ գրողի հիշատակի պահպանման անսպառ նվիրվածության մասին: «Ես շատ անգամ եմ տեսել և հանդիպել Ձեզ: Առաջին անգամ այդ 1926 թվի ամռանն էր: Ես Պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող էի: Ամառային արձակուրդներին հայրենի քաղաքումն էի՝ էջմիածնում: Ձեր մտերիմ և հավատարիմ ընկեր մեծ բանաստեղծ Ե. Չարենցի, պրոֆեսոր Հայկ Գյուլիքեխյանի և էլի երկու գրողների հետ եկել էիք էջմիածին գրական կյանքին ծանոթանալու և գրասերների միություն կազմակերպելու: Հավաքվեցին տպարանի բանվորները, ուսանող երիտասարդները, բարձր դասարանի աշակերտները: Զրույցը, որը վարում էր Ե. Չարենցը, վերաբերում էր նոր կազմակերպվող Սովետական գրականության հարցերին: Ինձ հանձնարարեցիք գրական խմբակ կազմակերպել (ես

մասնակցում էի համալսարանի գրական խմբակին): Ձեր հանձնարարությունը կատարեցինք և ունեցանք մի քանի պարապմունք:

1934-35 ուսումնական տարում ես ուսուցիչ էի Էջմիածին քաղաքի նո. 1 միջնակարգ դպրոցում, որը տեղավորված էր նախկին Գևորգյան ճեմարանի շենքում, ուր տարիներ առաջ սովորել էիք նաև Դուք: Հաճախ տեսնում էի Ձեզ մատենադարան գնալիս կամ հենց մատենադարանում՝ խորասուզված հին ձեռագրերի մեջ, ուր որոնում և ուսումնասիրում էիք Վարդան Այգեկցու առակները, որոնք հետագայում լույս տեսան աշխարհաբար՝ «Աղվեսագիրք» վերնագրով: Ձեզ սիրահոժար ընդառաջում էր Ձեր նախկին ուսուցիչ Սենեքրիմ Տեր-Հակոբյանը: Նա էլ ունեցավ Ձեր դաժան ճակատագիրը:

Եկան մրրկաշունչ և հոգեմաշ տարիներ ու պատերազմ: Հուդայի թոռները ժամանակավոր հրձվանք ապրեցին: Բայց պատմության արդար ձայնն ուժեղ և հզոր հնչեց կուսակցության 20-22-րդ համագումարներում: Վերականգնվեց ոտնակոխ եղած արդարությունը և անմեղ զոհերը վեր հառնեցին իրենց անհայտ ու անանուն շիրիմներից: «Մարգարիտները ցեխի մեջ չեն քայքայվում» (Վ. Հյուգո):

Վեր բարձրացաք Դուք և Ձեր բախտն ունեցող բոլոր զրպարտված անմեղները: Հրատարակվեցին և վերահրատարակվեցին Ձեր սքանչելի ստեղծագործությունները:

1956 թվից հայ գրական մեծերի հետ Ձեզ էլ եմ դասարան տարել և իմ սաների զգայուն հոգիներին հաղորդակից դարձրել Ձեր շենշող ստեղծագործությունների կախարդական հմայքը:

Ձեր անմահ ստեղծագործություններից և սքանչելի թարգմանություններից, որոնք հրատարակվել էին Ձեր կենդանության օրոք, պահել էի մեծ դժվարությամբ, բայց խորունկ հավատով: «Աբովյանի անհայտ բացակայությունը», «Տարաս Բուլբա», «Գյուլիվերի ճանապարհորդությունը» և այլն, սիրով նվիրեցի հայրենի Գորիսում Ձեր տուն-թանգարանին, որտեղ ապրում է Ձեր տաք շնչառությունը» [Նույն տեղում]:

Այս փոքրիկ, սակայն նշանակալի դրվագները՝ Բակունցի այցելությունները Էջմիածին, Չարենցի հետ գրասերների միություն ստեղծելու նախաձեռնությունը, մատենադարանում աշխատելը, Սենեքրիմ Տեր-Հակոբյանի հետ շփումները, ով նրան սիրահոժար ընդառաջում էր որպես Գևորգյան ճեմարանի իր նախկին սանի, բացահայտում են նրա կենսագրության ուշագրավ նոր կողմերը:

Այնուհետև Դանդյանը պատմում է, թե ինչպես է 1972 թվականին ծանոթացել Բակունցի որդու՝ Սևադայի հետ, որ արդեն գիտական համբավ ուներ:

Իր սրտագրավ հուշագրությունը Դանդյանը ամփոփում է այսպես.

«Բտալական վերածննդի մեծ բանաստեղծ Պետրարկայի (1304-1374) գերեզմանին գրված է. «Ինձ որոնեք ապրողների մեջ»: Այս խոսքերը անմնացորդ վերաբերվում են Ձեզ, խոսքի մեծ վարպետ՝ Ակսել Բակունց: Դուք կաք և մնում եք հայ բազմադարյա գրականության՝ Մաշտոցից մինչև Պարույր Սևակ ձգվող ոսկե շղթայի փայլուն օղակներից մեկը: Դուք հավերժ կապրեք վերածնված Հայաստանում և հայ ժողովրդի սրտում:

Իսկ Ձեզ գրադարտողների, բանասերկու գրչակների անարժան գերեզմանները թող ծածկվեն փշով, տատասկով, թքով, ամոթով, նախատինքով ու հավիտենական անեծքով» [Նույն տեղում]:

*Հայկ Դանդյան /ստորագրություն/
ՀԱՅԿ. ՄՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՏԵՐԱՆ
Էջմիածին 1980 թ., հունիս*

Այժմ ներկայացնենք Հայկ Դանդյանի արժեքավոր նվիրատվությունները, որոնք այսօր մշտական տեղ ունեն Ակսել Բակունցի տուն-թանգարանի ցուցադրությունում: Դանդյանը 1976 թվականի մարտի 31-ին թանգարանի վարիչ Քաջիկ Միքայելյանին գրել է. *«Մեծ գրողի գրական ժառանգության այս մասունքները պահել եմ դժվարություններով՝ հավատալով արդարության հաղթանակին»*, ուստի դրանք թանգարանին հանձնում էր բացառիկ հոգածությամբ ու անկեղծ հարգանքով:

1. «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայությունը»,

2. Ն. Գոգոլի «Տարաս Բուլբա» վեպի առանձին հրատարակությունը (1934 թ.), որի թարգմանիչը, խմբագիրը և առաջաբանի հեղինակն Ակսել Բակունցն է:

Դանդյանը սրտառույ խոսքով գրում է. *«Թող այս մասունքները հանգստանան նրա տուն-թանգարանում. նվիրում եմ սիրով և ակնածանքով՝ Հայկ Դանդյան»* [Նույն տեղում]:

Ավելի ուշ՝ 1979 թվականին, նա թանգարանին է նվիրել նաև Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը», որի խմբագիրը և առաջաբանի հեղինակը նույնպես Ակսել Բակունցն է:

Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Քաջիկ Միքայելյանին 1977 թվականի օգոստոսի 9-ին հասցեագրած նամակում Դանդյանը գրում է. *«Թանգարանին, իբրև նվեր, ուղարկում եմ այս նյութերը»*.

1. «Սովետական գրականություն», N 5, 1957 թ.,

2. «Գրական թերթ», 1966 թ., 22 ապրիլի,

3. «Ես Բակունցի Մուրոն եմ», Ալեք Խաչունց, տպված «Ավանգարդ» թերթում:

Խնդրում եմ, փաթեթն ստանալուն պես պատասխանեք, որ տարակուսած չմնամ: Առաջիկայում կուղարկեմ Բակունցի թարգմանությամբ և առաջաբանով «Գուլիվերի ճանապարհորդությունը»: Բարեկամի զգացմունքներով՝ Հայկ Դանդյան, 9/VIII 77 թ., Էջմիածին» [Նույն տեղում]:

Այս նվերների արժեքը թանգարանի համար անգնահատելի է: Այն ոչ միայն արտացոլում է գրքերի պատմական արժեքը՝ լույս տեսած Բակունցի կենդանության օրոք, այլև վկայում է հրաշքով պահպանվելու՝ դրանց դժվարին ճանապարհը ռեպրեսիայի տարիներին, երբ շատ արժեքավոր նյութեր անհետացան կամ ոչնչացան: Այս բացառիկ գրքերը այսօր ոչ միայն ցուցանմուշներ են, այլև տուն-թանգարանի «շնչառությունն» են. դրանց էջերում ապրում է Բակունցի ստեղծագործական ոգին, նրա մտքի ճախրանքը և նվիրյալների հավատը:

«Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (Երևան, Պետհրատ, 1932 թ.)՝ Բակունցի այս ուսումնասիրությունը (առաջին վեց գլուխները և յոթերորդի վերջին պարբերությունը) նախապես տպագրվել է «Նոր ուղի» հանդեսում (գիրք 2) 1932 թվականին, իսկ ամբողջությամբ և առանձին գրքով՝ Պետհրատի կողմից նույն թվականին (Ե., Պետհրատ, 1932 թ., 64 էջ)՝ 3000 տպաքանակով: Գրքի անվանաթերթին է՝ «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը: Արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա գրեց Ակսել Բակունց: Պետական հրատարակություն, Երևան, 1932»: Գրքի շապիկի վրա փակցված է Աբովյանի նկարը (ցավոք, թանգարանում պահվող օրինակում նկարը պոկված է՝ Թ.Մ.), որը համապատասխանել է գրողի հայտնի միակ դիմանկարին՝ Լ. Տիգրանյանի ջանքերով Տփղիսում գործած լուսանկարիչ Բարկանովի արտահանած պատճենի: Ներքևում ընդգրկված է նաև ինքնագիրը՝ «Խաչատուր Ապովեան», որը վերցված է դորպատյան տարիների ձեռագրերից: Հետագայում աշխատությունն արտատպվել է «Ա. Բակունց, Գրականության մասին» (1959 թ.) գրքում, որտեղ կրճատված են Ե, Զ գլուխները և է գլխի որոշ հատվածներ: Երկու հատորով երկերում ուսումնասիրությունը նույնպես կրճատված է հրատարակվել, և միայն Բակունցի ակադեմիական քառահատորյակը արտատպել է սույն՝ առանձին հրատարակության բնագիրը:

Նիկոլայ Գոգոլի «Տարաս Բուլբա» (Երևան, Պետհրատ, 1934 թ.)՝ Դանդյանը գրքի վրա թողել է ընծայագիր՝ «Նվիրում եմ Ակսել Բակունցի տուն-թանգարանին: Հայկ Դանդյան: Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցիչ: Էջմիածին-Գորիս, 31.3.76 թ.» [Ակսել Բակունցի տուն թանգարանի հիմնական ֆոնդ]:

Գոգոլի «Տարաս Բուլբա» հայերեն այս հրատարակության թարգմանիչը և առաջաբանի հեղինակը Ակսել Բակունցն է: Գիրքը հանձնվել է տպագրության՝ 26 հունվարի 1934 թ., ստորագրվել է տպագրության՝ 22 մարտի, 1934 թ.: Ամենայն հավանականությամբ Բակունցը «Տարաս Բուլբա»-ի թարգմանությունը կատարել է 1933 թվականին, և առաջաբանն էլ այդ նույն թվականին է գրված: Առաջաբանը որոշ կրճատումներով տպագրվել է «Ակսել Բակունց, Գրականության մասին» (1959 թ.) գրքում, նույնը նաև՝ Երկերի ժողովածուի երկհատորյակում: Ակադեմիական քառահատորում այն հրապարակվել է՝ ըստ 1934 թվականի սույն առանձին հրատարակության: Գոգոլի «Տարաս Բուլբա»-ի թարգմանությունն ու Բակունցի հեղինակած առաջաբանը ժամանակին բարձր գնահատվել են, թեև եղան առանձին բացասական, կամայական արձագանքներ: Ավելի վաղ «Տարաս Բուլբա»-ն թարգմանել է Մանուկ Աբեղյանը, տպագրվել է Թիֆլիսում, 1892 թվականին: Բակունցի հոգվածը վերաբերում է ոչ միայն մեծանուն գրող Գոգոլի հանրահայտ պոեմին, ոչ միայն հայ-ռուսական գրական կապերին, այլ նաև համաշխարհային մշակույթին հուզող հիմնախնդիրներին՝ իրենց նշանակությամբ միշտ թարմ ու ուսուցանող: Ռուսական և հայկական գոգոլագիտության մեջ ոչ ոք այնպես խորքային, համոզիչ վերլուծության ու արժևորման չի ենթարկել «Տարաս Բուլբա»-ն, ինչպես Բակունցը: Թարգմանությանը Բակունցը կցել է նաև «Բառարան», որն աչքի է ընկնում կոզակական միջավայրին ու կենցաղին բնորոշ

հասկացությունների՝ հայերեն համապատասխանությունների ճշգրիտ բացատրություններով:

Ջոնաթան Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները» (Երևան, Պետհրատ, 1934 թ.)՝ այս բացառիկ հրատարակությունը նույնպես թանգարանում ցուցադրվում է Հայկ Դանդյանի ջանքերով: Այն թարգմանել է մոսկվաբնակ գրող, գրական գործիչ Կարեն Միքայելյանը, խմբագիրը և առաջաբանի հեղինակը Ակսել Բակունցն է, անվանաթերթը և նախաթերթը նկարագարող է Հակոբ Կոջոյանը, պատասխանատու խմբագիրն է Եղիշե Չարենցը, որը այդ ժամանակ Հայպետհրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր և նախաձեռնեց Ջ. Սվիֆտի գիրքը հրատարակելու գաղափարը՝ վստահելով Բակունցին խմբագրել և առաջաբան գրել: Սվիֆտի այս ստեղծագործության հայերեն առաջին լրիվ հրատարակությունը հայ գրական կյանքում բացառիկ երևույթ էր, ջերմորեն ընդունվեց ընթերցողների կողմից (թեև բնական է, եղան նաև ընդդիմախոսներ):

Թարգմանիչ Կարեն Միքայելյանը անհատի պաշտամունքի տարիներին բռնադատված մտավորականներից է: Նրա ստեղծագործությունները գրեթե չեն ուսումնասիրվել, իսկ մեծ մասը՝ քաղաքական հալածանքների հետևանքով, կորել է կամ ոչնչացվել: Արդարացումից հետո միայն մասամբ վերականգնվել է նրա ժառանգությունը, և 1961-ին Երևանում տպագրվել է «Կեցցեն հաղթվածները» պատմվածքների ժողովածուն:

Բակունցի գնդակահարությունից հետո, երբ նրա հետքերը ամենուր ջնջվում էին, Ջոնաթան Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները» գիրքը սրբությամբ պահպանելը վկայում է Դանդյանի մեծ նվիրումի մասին: Թանգարանի վարիչին 12.VI.79 թ. հասցեագրած նամակում Դանդյանը գրում է. *«Ուղարկում եմ Բակունցի թարգմանությամբ և առաջաբանով՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները»: Այդ գիրքը ծանր ճակատագիր է ունեցել. ինչպես կտեսնեք, պոկված է տիտղոսաթերթը, Բակունցի անունը քիմիական մատիտով ջնջված է: Այդ վիճակում 1937 թ. ես վերցրել եմ մեկից, ով ուզում էր այրել: Գրքի այդ վիճակն էլ խոսում է այն ծանր օրերի ահ ու սարսափի մասին»* [Ակսել Բակունցի տուն թանգարանի գիտաօժանդակ ֆոնդ]:

Գիրքը ունի նաև ընծայագիր՝ *«Այս տանջված ու հոգնած գիրքը թող հանգստանա նրա տաղանդավոր թարգմանիչ և ծավալուն առաջաբանի հեղինակ մեծանուն գրող Ակսել Բակունցի տուն-թանգարանում: Միտքով նվիրում եմ Բակունցի 80-ամյակի առթիվ. Հայկ Դանդյան: Հայկական ՄՍՀ վաստակավոր ուսուցիչ: 13 հունիսի 1979 թ. Էջմիածին-Գորիս»:*

Ինչպես վկայում է նվիրատուն, գիրքը փրկելու համար անհնարին քայլեր են ձեռնարկվել՝ պոկվել է անվանաթերթը, որը գեղարվեստորեն ձևավորված էր Կոջոյանի կողմից, վերնագրից հետո նշված՝ «Թարգմ. Կարեն Միքայելյան, խմբ.՝ Ակսել Բակունց»: Գիրքի առաջաբանի բոլոր էջերի վերևի հատվածից, հասկանալի պատճառներով, *ջնջվել է Բակունցի անունը*: Միայն այդ կերպ հնարավոր եղավ այդ դժնդակ տարիներին պահպանել Բակունցի հետ առնչվող այս բացառիկ ստեղծագործությունը, և դրա համար մենք պարտական ենք Հայկ Դանդյանի վճռական նվիրումին:

Ինչպես նշեցինք, Դանդյանի նվիրումը Բակունցին և նրա սրբազան տուն-թանգարանին չի սահմանափակվել միայն բացառիկ հրատարակությունների

նվիրատվությամբ: Նա պարբերաբար ուղարկել է գրողի կյանքին ու գործին առնչվող տարբեր նյութեր, մամուլի կարևոր հրապարակումներ՝ թանգարանի արխիվում պահպանության համար:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Դանդյանի 27.07.1976 թ. նամակը՝ հասցեագրված թանգարանի տնօրեն Քաջիկ Միքայելյանին. *«Շատ հարգելի Քաջիկ Միքայելյան: Բակունցի տուն-թանգարանին եմ ուղարկում այս թերթը՝ «Սովետական Հայաստան» 1949թ. սեպտեմբերի 23 N 226/8375/: Թերթը նվիրված է Խ.Աբովյանի մահվան 100-ամյակին: Չգիտեմ, դուք Վալերի Կիրպոտինին գիտե՞ք արդյոք: Թերթի 4-րդ էջի նկարը՝ մեջտեղի կանգնածը: Նա 1937 թ. ապրիլին Հայաստանի գրողների պլենումում ելույթ ունեցավ, որը տպվեց «Խորհրդային Հայաստան» թերթում (23 ապրիլի, 1937 թ.): Հոդվածը շաղախված է ամենամահաբեր թույնով՝ հատկապես Բակունցի և Չարենցի մասին: Մեծ սպառնալիքներ՝ Իսահակյանի հասցեին: Այդ հոդվածի բնագիրն ինձ մոտ է: Պիտի բազմացնեմ և մեկական օրինակ ուղարկեմ Իսահակյանի, Չարենցի և Ձեր տուն-թանգարաններին: Իսկ Զվյագինցևան՝ հայ ժողովրդի մեծ բարեկամն է ու պոեզիայի ջերմ երկրպագու և թարգմանիչ: Ես էլի նյութեր կուղարկեմ Ձեզ՝ Բակունցին վերաբերող: Կիրպոտինի նկարը պահեք որպես անեծքի և դատապարտության նշան... Լավագույն ցանկություններով՝ Հայկ Դանդյան /ստորագրություն/, 27.07.1976 թ., Էջմիածին» [Նույն տեղում]:*

Թանգարանին հասցեագրված մեկ ուրիշ նամակում Դանդյանը հավելում է. *«Ուղարկածս քաղվածքներից ինչպես տեսաք, թույն է կաթում: Սրիկա զրպարտիչները ազնիվ մարդկանց կորցնելուց հետո գրադարաններից էլ վերացրել են նման նյութերը, որ իրենց սև հետքը կորի: Թեկուզ չցուցադրեք, բայց լավ պահեք այդ քաղվածքները, և հավատացեք, կգա ժամանակ՝ դրանց մասին կգրվի բացեիքաց...» (12.VI.79 թ.)* Նույն տեղում]:

Թանգարանում Բակունցին նվիրված հիշատակի օրվան մասնակցելու հրավերին ի պատասխան՝ Դանդյանը գրում է. *«Շնորհակալություն հրավերի համար: Անկեղծ ասած, հուլիսի 5-ը ինձ համար երջանիկ օր կլինեք, եթե կարողանայի ներկա լինել հանդեսին: Համոզված եղեք, որ մտքով Գորիսում կլինեմ, դա միայն Բակունցի մեծարման տոն չէ, դա նաև վերականգնված արդարության տոն է»* [Նույն տեղում]:

Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցը այսօր էլ առանձնակի սիրով է մեծարում իր պատմության էջերը փառազարդած վաստակավոր ուսուցչին՝ Հայկ Դանդյանին: Դպրոցում գործում է նրա անունը կրող դասասենյակ, որտեղ տեղադրված է մանկավարժության նվիրյալի կիսանդրին, ներկայացված են կյանքի ու գործունեության ուշագրավ դրվագներ: Պարբերաբար կազմակերպվում են մեծարման ցերեկույթներ, և նրա լուսավոր կյանքի օրինակը հասնում է նոր սերունդներին:

«Չարանենգ բանասարկուների հախուռն քրքիջի տակ ու նրանց ձեռքով զոհ գնաց Ակսել Բակունցը: Մեծ նահատակ, քեզ հազար փառք...» [Նույն տեղում]:

– այսպես վկայում է Հայկ Դանդյանի սրտի խոսքը, որն այսօր շարունակում է մնալ Բակունցի տուն-թանգարանի վառ ուղենիշը:

Եզրակացություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայկ Դանդանի նվիրումը միայն նյութական արժեքների փոխանցում չէր. այն արժեքների փրկություն էր՝ ժամանակի, քաղաքական հետապնդումների ու մշակութային ոչնչացման վտանգի դեմ: Դանդանի գործունեությունը հաստատում է մի կարևոր ճշմարտություն՝ թանգարանները գոյատևում են ոչ միայն պետական կառույցների, այլև առաջին հերթին՝ անհատ նվիրյալների շնորհիվ, ովքեր իրենց վստահված ժառանգությունը պահպանում են որպես հոգևոր պարտք:

Ակսել Բակունցի տուն-թանգարանը ոչ միայն գրողի ստեղծագործական ժառանգության պահպանման ու ցուցադրման վայրն է, այլև նվիրվածության, հոգատարության ու մշակութային հիշողության կենդանի խորհրդանիշը:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը ընդգծում է, որ Բակունցի տուն-թանգարանը ձևավորվել է հավատարմության ու նվիրվածության ուժով, իսկ Դանդանի ընծաները դարձել են դրա կենդանի շնչառությունը՝ օրինաչափորեն միաձուլելով անցյալն ու ներկան, գրականությունը և մարդկային ազնվությունը:

SUMMARY

This study examines the role of Hayk Danghyan in the formation and preservation of the Aksel Bakunts House-Museum, offering a scholarly interpretation of his exceptional dedication. The aim of the article is to demonstrate how the steadfast commitment of an individual becomes a driving force in safeguarding cultural heritage, and how Danghyan's literary and documentary donations have become integral elements of the museum—the living “memory” of the writer. Drawing on archival documents, Danghyan's handwritten materials, museum correspondence, and rare editions, the article reconstructs the history of how these works were preserved during the repressive 1930s–40s, and highlights their significance for the study of Bakunts's biography, literary activity, and for the development of museum studies.

The objectives of the study are to:

Reconstruct the historical, literary, and personal connections between Hayk Danghyan and Aksel Bakunts.

Present the preservation history of the rare editions donated by Danghyan to the museum, using archival evidence.

Analyze how an individual's personal initiative can become a decisive factor in the protection of literary heritage.

Reveal the mechanisms through which cultural values survived during the years of political repression and cultural erasure.

Assess the role of devoted individuals as carriers and guardians of heritage in the formation of the Bakunts House-Museum.

Methodology: The research employs archival analysis, comparative study of textual sources, chronological reconstruction, museum-studies perspective, and cultural memory theory. Danghyan's letters, dedications, press materials, and the documented histories of these editions serve as primary sources.

Conclusion: The analysis demonstrates that Hayk Danghyan's contribution was not merely the transfer of material items; it was an act of preservation against the pressures of time, political persecution, and cultural destruction. Thanks to his dedication, Bakunts's creative spirit survived not only in the texts but also as an exemplar of cultural resilience. Danghyan's work affirms a fundamental truth: museums endure not only through institutional structures but above all through devoted individuals, who safeguard inherited values as a moral responsibility.

Thus, the study underscores that the Aksel Bakunts House-Museum was built through loyalty and memory, and that Danghyan's donations have become its living essence—harmoniously linking past and present, literature and human integrity.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ակսել Բակունցի տուն-թանգարանի գիտաօժանդակ ֆոնդեր:
2. Ակսել Բակունցի տուն-թանգարանի հիմնական ֆոնդեր: